600.0308.14.08.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2019 թվականի №308Ա

քաղ. Երևան

«ՅՈՒՔՈՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, հաշվի առնելով «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի մարտի 22-ի և հունիսի 13-ի, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2019 թվականի մայիսի 2-ի №01/11.1/5527-19 և օգոստոսի 12-ի №01/11.1/9626-2019 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Համաձայնություն տալ «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների 68,5 տոկոս բաժնեմասերը որպես հաջորդող գրավ հօգուտ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության գրավադրելուն՝ ըստ ստորև բերված աղյուսակի.

Ընկերության մասնակից	Բանկում գրավադրված (հաջորդող գրավադրվելիք) բաժնեմաս (%)
«ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ	29.09306722689080
Արտյոմ Խաչատրյան	11.90894957983190
Գուրգեն Խաչատրյան	11.90894957983190
Արամ Խաչատրյան	9.64861344537816
Հայկ Եսայան	2.97021008403362
Ալեքսանդր Եսայան	2.97021008403362

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով տրված համաձայնությունը գործարքի կնքման համար վավեր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում:

3. «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել դրան առնչվող փաստաթղթերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ս. ԱՂԻՆՅԱՆ

ք. Երևան
14 օգոստոսի 2019թ.